

Էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

Հավելված 2.1

#	Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Փաստաթղթի տեղեկատվության ներկայացման ձևը և վաղեմության ժամկետը (օրացուցային օր)՝ մինչև դիմում-հայտն ընդունելը
<b>1. Հայտի նախնական ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր</b>		
1.	Վարկ ստանալու Դիմում-հայտ(եր)	բնօրինակ
2.	Վարկառուի (համավարկառու(ներ)ի) և երաշխավոր(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ, սոցիալական քարտ (չունենալու դեպքում համապատասխան տեղեկանք)	բնօրինակ
3.	Վերանորոգվող բնակելի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական	պատճեն
4.	Վերանորոգվող բնակելի անշարժ գույքի հաստակագիծ (Եթե առկա չէ սեփականության վկայականում)	պատճեն
5.	Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ Համաձայնություն (Հավելված 3)	բնօրինակ
6*	Վերանորոգվող գույքի սեփականատիրոջ (համաձայնականատիրոջ) գրավոր հայտարարություն առ այն, որ վերջինս տեղյակ է և չի առարկում, որպեսզի իր բնակելի անշարժ գույքը վերանորոգվի (Եթե վարկառուն կամ համավարկառուն չեն հանդիսանում վերանորոգվող գույքի առևձայն համասեփականատեր)	բնօրինակ
<b>2. Հայտի վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր</b>		
7.	Վարկառուի և/կամ երաշխավորի ծննդյան վկայական (անհրաժեշտության դեպքում)	բնօրինակ
8.	Ամուսնության վկայական, ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, եթե հաճախորդ/համավարկառուն ամուսնացած է;	բնօրինակ
9.	Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից տրամադրված անշարժ գույքի գնահատման հաշվետվություն	բնօրինակ 180 օր
10.	Անշարժ գույքի սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը	բնօրինակ
11.	Սեփականության իրավունքի գրանցման վկայականի տրման հիմքեր (սեփականաշնորհման որոշումներ, աղքտավճարողի, նվիրատվության պայմանագիր, ժառանգության իրավունքի վկայագրի, դատարանի վճիռներ և այլ)	պատճեն (էլեկտրոնային կամ թղթային)
12.	Շինարարական աշխատանքների նախահաշիվ ձև (ՓՕ 75-17-Օ1-Օ4)	պատճեն (էլեկտրոնային կամ թղթային)
<b>2.1 Առաջնային եկամուտներ</b>		
13**	Վարկառուի (համավարկառու(ներ)ի) և երաշխավոր(ներ)ի Տեղեկանք՝ տրված հաճախորդի (համավարկառու(ներ)ի) գործառուի կողմից (ամսվայության դեպքում՝ ձևաթղթի վրա), որի վրա նշվում է տեղեկանքի տրման ամսաթիվը և որը պարունակում է տվյալներ ներկայում գեղբայրացած պաշտոնի, տվյալ գործատուի մոտ անընդմեջ աշխատանքային ստաժի, վերջին 12 ամիսների փաստացի ստացված եկամտի չափի վերաբերյալ*:	բնօրինակ 30 օր
14.	Եթե տվյալ գործատուի մոտ հաճախորդի աշխատանքային ստաժը պակաս է 12 ամսից և ներկայիս աշխատավայրը չի հանդիսանում առաջին աշխատավայրը, ապա տեղեկատվություն նախկին զբաղման ժամանակ վերաբերյալ՝ Նորը տեղեկատվական կենտրոնից (հարգումը կատարվում է Բանկի կողմից)	պատճեն (էլեկտրոնային կամ թղթային)
15***	Վերջին 6-12 ամիսների 1. փաստացի ստացված եկամտի վերաբերյալ քարտային հաշվի քաղվածք 2. կամ գործատուի կողմից տրամադրված եկամտային հարկի հաշվետվությունը (ձևաուցումներով), 3. կամ ֆինանսական անձանց անհատական հաշվի քաղվածք 1 տարվա քաղվածքով՝ տրված ՊԵԿ-ի կողմից*	բնօրինակ 30 օր
<b>2.2 Երկրորդային եկամուտները (ամսվայության դեպքում) հիմնավորող փաստաթղթեր</b>		
16.	Գույքի վարձակալության պայմանագրեր (ամսվայության դեպքում նաև վարձակալության իրավունքի գրանցման վկայական)	բնօրինակ
17.	Պետական գանձառնական պարտատուներում, այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտները հիմնավորող փաստաթղթեր	բնօրինակ
18.	Վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումը հիմնավորող փաստաթղթեր (Ծառայությունների մատուցման պայմանագրեր, տեղեկանք, հայտարարագրեր՝ տրված ֆիզ. անձանց կողմից և նրանց անձը հաստատող փաստաթղթերը և այլն)	բնօրինակ
19.	Ստացված դրամական օգնությունը (տրանսֆերներ) հիմնավորող փաստաթղթեր	բնօրինակ
20.	Չինվորական թղթակց (ցմահ) հիմնավորող փաստաթղթեր	բնօրինակ
21.	Ընտանիքի ներակալող անդամին կորցնելու դեպքում ստացվող թոշակը (ցմահ) հիմնավորող փաստաթղթեր	բնօրինակ
22.	Երկարամյա ծառայության կենսաթոշակ (Պաշտպանության նախարարության, Ոստիկանության, Քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցներին)	բնօրինակ 30 օր
23.	Վերջին 6-12 ամիսների փաստացի ստացված եկամտի վերաբերյալ քարտային հաշվի քաղվածք, անհրաժեշտության դեպքում՝ 16-23 կետերում ստացվող եկամուտները հիմնավորելու համար, եթե եկամուտները ստացվում են քարտային հաշվին	բնօրինակ
<b>3. Վարկի ձևակերպման համար հաճախորդից պահանջվող փաստաթղթեր**</b>		
24.	Հաճախորդի բանկային հաշվի պայմանագիր, որին պետք է փոխանցվի վարկի գումարը	պատճեն
25.	Եթե սեփականատերը/համասեփականատերը ամուսնացած է, ապա ամուսնության վկայական, ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնու մահվան դեպքում՝ մահվան վկայական, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայական	բնօրինակ
26.	Եթե սեփականատերն անպախախտ է: 1. օրինական ներկայացուցիչների (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև գրավոր համաձայնություն խնամակալի գույքը (բաժնի) գրավ դնելու և գրավ դրված գույքի (բաժնի) վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու մասին (14-18 տարեկան երեխաների դեպքում), 2. խնամակալության և հոգաբարձության մարմնից թույլտվություն խնամակալի գույքը (բաժնի) վաճառելու և (կամ) գրավ դնելու (այդ թվում գրավ դրված գույքի (բաժնի) վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու մասին պայմանով) գործարքի կնքման ու իրականացման երեխայի օրինական ներկայացուցիչ կողմից (մինչև 14 տարեկան երեխաների դեպքում) կամ այդ գործարքին երեխայի օրինական ներկայացուցիչ կողմից համաձայնություն տալուն (14-18 տարեկան երեխաների դեպքում)	բնօրինակ
27.	Տեղեկանք ՀՀ ՎԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից գրավարժող անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ (միասնական տեղեկանք)	բնօրինակ
<b>4. Այլ փաստաթղթեր</b>		
28.	Միայն վերաֆինանսավորողի պահանջով (գրավոր կամ բանավոր)՝ այլ փաստաթղթեր, որոնք կհիմնավորեն որակավորված վարկ լինելու հանգամանքը և/կամ ցանկացած այլ փաստաթղթեր	բնօրինակ
29.	Բանկի պահանջով այլ փաստաթղթեր վարկի նպատակային օգտագործման հաստատման համար	բնօրինակ կամ պատճեն՝ կախված պահանջվող փաստաթղթի բնույթից

\* Հայտարարությունը ներկայացվում է գրված ազատ ոճով, նշելով տեղեկացվածության և համաձայնության վերաբերյալ 6-րդ կետով սահմանված համապատասխան տեքստը:

\*\* Այն գերատեսչությունների կողմից տրված տեղեկանքները, որոնց աշխատակիցների պաշտոնները ենթակա չեն հրապարակման, ընդունելի են առանց պաշտոնի վերաբերյալ նշման:

- \*\*\*15-րդ կետում նշված փաստաթղթերը չեն պահանջվում հետևյալ կազմակերպությունների աշխատակիցներից.**
- Պետական հիմնարկներ և 50% և ավելի պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից շնորհված Ա-Գ վարկակիշ և (կամ) լիցենզիա ունեցող կազմակերպություն՝ բացառությամբ գրավաբերների
  - Այլ երկրների պետական մասնակցություն ունեցող կազմակերպություններ (այդ թվում՝ դեսպանարներ, հյուպատոսական ներկայացուցչություններ), ինչպես նաև 50% և ավել միջազգային կազմակերպություններին կամ այլ պետություններին պարկանող կազմակերպություններ,
  - Վերջին հաշվերու ժամանակաշրջանի համար հրապարակված ՀՀ 50 խոշոր հարկատուներ

\*\* Եթե գործարքի կողմերից (վարկառու, համավարկառու երաշխավոր) որևէ մեկի փոխարեն հանդես է գալիս լիազորված անձ, ապա պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է նաև միայն ՀՀ տարածքում տրված լիազորագիրը՝ նույնպես վավերացմամբ կամ նույնպիսի վավերացմանը հավասարեցված և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ: Լիազորագիրը պետք է համապատասխան բանկի պահանջներին: Լիազորագրի վաղեմության ժամկետը՝ 6 ամիս, եթե լիազորագրում նշված չէ ավելի կարճ ժամկետ

Ծանոթություն

Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և (կամ) ելնելով տարբեր ծրագրերով վարկավորման առանձնահատկություններից՝ սույն ցանկով նախատեսված որոշ փաստաթղթեր, և/կամ դրանց ներկայացվող պահանջները կարող են չպահանջվել կամ պահանջվել առանձին որոշումներով նախատեսված լրացուցիչ փաստաթղթեր

Առաջնային և/կամ երկրորդային եկամուտները հիմնավորող փաստաթղթերը վարկառուից և/կամ համավարկառու(ներ)ից չեն պահանջվում, եթե վարկառուն և/կամ համավարկառուն, իրենց եկամուտներով չեն մասնակցելու սրացվող վարկի մարմանը: